կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հաշվի առնելով, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման, իսկ հայցվորը հայց ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 25.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված պահանջի մասով նախապես վճարված պետական տուրքի գումար:, իսկ մնացած մասով պետական տուրքի հարցը Դատարանը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Նէեմիա Ավակիմյան Արթուրի Ա/Ձ-ի հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքի ղեկավարի՝ Նէեմիա Ավակիմյան Արթուրի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.10.2024 թվականի թիվ 2129-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի:

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքի ղեկավարի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 11.10.2024 թվականի թիվ 2129-Ա որոշումն՝ Նէեմիա Ավակիմյան Արթուրի Ա/Ձ-ի մասով:

1.2. Մնացած մասով հայցը մերժել:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանից հօգուտ Նէեմիա Ավակիմյան Արթուրի Ա/Ձ-ի բռնագանձել 25.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

2.1. Պետական տուրքի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am